

« Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 21/3

3 մայիսի 2013թ.

Քննարկման ընթացքում նշվեց, որ « ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 23.04.2013թ-ի նիստում քննության է առնվել «Գրիգորյաններ տրանս սերվիս» ՍՊԸ 05.04.2013թ-ի բողոքը « ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ 13.03.2013թ. թիվ 1103286 ստուգման ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն վերոգրյալ ստուգման ակտի 1-ին կետից նվազեցվել է 3.000.000 դրամ:

Համաձայն « ԿԱ ՊԵԿ նախագահի 07.02.2013թ. թիվ 1103286 հանձնարարագրի «Գրիգորյանների տրանս սերվիս» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է աշխատողի աշխատանքի ընդունումը « օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության, ինչպես նաև օրենքով սահմանված ելակետային տվյալների և գործակիցների ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է « ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ 13.03.2013թ. թիվ 1103286 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 12.680.640 դրամ:

Ընկերության բողոքը վերաբերվում է ստուգման ակտով եկամտային հարկի գծով լրացուցիչ առաջադրված պարտավորությանը: Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է.

որ ընկերությունում թվով 19 վարձու աշխատող ձևակերպված չէին « օրենսդրությամբ սահմանված կարգով, չէր կատարվել « Աշխատանքային օրենսգրքի 14-րդ և 85-րդ հոդվածների պահանջները, որի համար նախատեսված է պատասխանատվություն «Եկամտային հարկի մասին» « օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասի հատկանիշներով, այն է՝ աշխատողի աշխատանքի ընդունումը « օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու փաստը լիազոր մարմնի կողմից « օրենսդրությամբ սահմանված կարգով արձանագրելու դեպքում գործատուն տվյալ ամսում յուրաքանչյուր չձևակերպված վարձու աշխատողի համար հաշվարկում և վճարում է 600.000 դրամ եկամտային հարկ: Այսպիսով լրացուցիչ վճարման ենթակա գումարը կազմում է 11.400.000 դրամ:

«Գրիգորյաններ տրանս սերվիս» ՍՊԸ գանգատում մասնավորապես նշված է.

ստուգման ակտի 1-ին կետով նշվում է, որ ընկերությունում թվով 19 վարձու աշխատող ձևակերպված չէին « օրենսդրությամբ սահմանված կարգով, չէր կատարվել « Աշխատանքային օրենսգրքի 14 և 85 հոդվածների պահանջները: Նշվածը որակվել է որպես «Եկամտային հարկի մասին» « օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված խախտում և այդ իրավանորմի կիրառմամբ եկամտային հարկ է հաշվարկվել 11.400.000 դրամ:

«Եկամտային հարկի մասին» « օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված է. «Աշխատողի աշխատանքի ընդունումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի և (կամ) գրավոր պայմանագրի բացակայության) փաստը լիազոր մարմնի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով արձանագրելու դեպքում գործատուն (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով չգրանցված և արտոնագրային վճար վճարող չհանդիսացող) տվյալ (արձանագրման) ամսում յուրաքանչյուր չձևակերպված վարձու աշխատողի համար հաշվարկում և վճարում է եկամտային հարկ՝... դ. 600.000 դրամի չափով, եթե չձևակերպված վարձու աշխատողների քանակը գերազանցում է ինը»:

Ակնհայտ է, որ տվյալ իրավանորմը կիրառելի է համապատասխան փաստը « Կառավարության սահմանած կարգով արձանագրվելու դեպքում, այսինքն՝ այս նորմի

կատարումն ուղղակիորեն պայմանավորված է « կառավարության կողմից համապատասխան կարգ սահմանող իրավական ակտի ընդունմամբ: Իսկ « կառավարությունն աշխատողի աշխատանքի ընդունումը « օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու փաստն արձանագրելու կարգը դեռևս չի սահմանել:

<Իրավական ակտերի մասին> « օրենքի 68-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն. «Եթե իրավական ակտում նախատեսված նորմի պահանջի կատարում կարող է միայն իրականացվել այդ իրավական ակտով նախատեսված իրավական այլ ակտի ընդունմամբ, կամ դրա կատարումն ուղղակիորեն պայմանավորված է իրավական այլ ակտի ընդունմամբ, ապա իրավական ակտն այդ նորմի մասով գործում է համապատասխան իրավական այլ ակտն ուժի մեջ մտնելու պահից>:

Քանի որ <եկամտային հարկի մասին> « օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասի կատարումը կարող է իրականացվել միայն աշխատողի աշխատանքի ընդունումը « օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու փաստը « կառավարության կողմից սահմանված կարգով արձանագրվելու դեպքում և այդ նորմի կատարումը ուղղակիորեն պայմանավորված է « կառավարության համապատասխան որոշման ընդունմամբ, ուստի, <եկամտային հարկի մասին> « օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասը կարող է գործել միայն « կառավարության համապատասխան որոշումն ուժի մեջ մտնելու պահից: « կառավարության կողմից այդ որոշումն ընդունված չլինելու պայմաններում <եկամտային հարկի մասին> « օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասը չի գործել, դրա հիման վրա հարկային պարտավորությունների առաջադրումը ոչ իրավաչափ է:

Նշեմ նաև, որ ընկերությունը եկամտային հարկը սահմանված կարգով հաշվարկել և վճարել է բոլոր, ներառյալ՝ ակտով նշված 19 աշխատողների համար, հարկի պակասեցում իրականում չի եղել, բոլոր աշխատողների համար առնվազն առկա են աշխատանքի ընդունման հրամաններ:

Ելնելով վերոգրյալից ընկերությունը խնդրում է անվավեր ճանաչել « ԿԱ ՊԵԿ Շենգավիթի <S 13.03.2013թ-ի թիվ 1103286 ակտի 1-ին կետը:

« ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ընկերության ներկայացուցիչների և ստուգման ակտը կազմած անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Ընկերության բողոքում բերված պնդման վերաբերյալ, որ <եկամտային հարկի մասին> « օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասի կատարումը կարող է իրականացվել միայն աշխատողի աշխատանքի ընդունումը « օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու փաստը « կառավարության կողմից սահմանված կարգով արձանագրվելու դեպքում և այդ նորմի կատարումը ուղղակիորեն պայմանավորված է « կառավարության համապատասխան որոշման ընդունմամբ, նշվեց հետևյալը:

<եկամտային հարկի մասին> « օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն. «Մինչև սույն օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված կարգի սահմանումը, բայց ոչ ուշ, քան մինչև 2013 թվականի հուլիսի 1-ը, սույն օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված չափերով եկամտային հարկի գումարները հաշվարկվում են մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը գործող կարգով աշխատողի աշխատանքի ընդունումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով չձևակերպելու փաստն արձանագրելու դեպքերում>:

Մինևսույն ժամանակ, սույն գործի ըստ էության քննարկման ընթացքում պարզվեց, որ ընկերության կողմից էլեկտրոնային եղանակով հարկային տեսչություն են ներկայացվել եկամտային հարկի 2013թ-ի հունվար և փետրվար ամիսների վերաբերյալ հաշվարկները: Նշված հաշվարկներում արտացոլված տվյալները ստուգման ընթացքում արձանագրված տվյալների հետ համադրման արդյունքում պարզվել է, որ ստուգման արդյունքում հայտնաբերված թվով 19 չձևակերպված աշխատակիցներից թվով 5 աշխատակիցների վերաբերյալ տվյալները ներառված են եկամտային հարկի 2013թ-ի հունվար և փետրվար

ամիսների հաշվարկներում: Նշված հանգամանքը չէր կարող հաշվի առնվել ստուգումն իրականացնող անձանց կողմից, քանի որ եկամտային հարկի 2013թ-ի հունվար և փետրվար ամիսների վերաբերյալ հաշվարկները ներկայացվել են ընկերությունում ստուգումն ավարտվելուց հետո ընկած ժամանակահատվածում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ ստուգման արդյունքում որպես ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով չձևակերպված աշխատակիցներ արձանագրված այն աշխատակիցների գծով առաջադրված պարտավորությունները, որոնց վերաբերյալ տվյալներն արտացոլված են ընկերության կողմից հարկային տեսչություն ներկայացված եկամտային հարկի 2013թ-ի հունվար և փետրվար ամիսների հաշվարկներում, ենթակա են նվազեցման ստուգման ակտից:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի «Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին» N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, սույն գործի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ընդունված որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ (այսուհետ՝ Գանգատարկման խորհուրդ): Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:


Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո ղ ո շ ու մ է՝

ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ 13.03.2013թ. թիվ 1103286 ստուգման ակտի 1-ին կետից նվազեցնել ընդամենը 3.000.000 դրամ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ